# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. **093-33-88-09**
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/53

«13» մայիսի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

<< Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2016թ-ի մայիսի 12-ի թիվ 08-Ա, 09-Ա, 10-Ա, 11-Ա և 12-Ա որոշումները:

Առդիր 6 թերթ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե h. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Է լ . փո ս տ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 12 » Մայիսի 2016 թվականի N 08-Ա

## ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2016թ.-ի մայիսի 12-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Ձորագետ համայնքի ավագանու 2016թ.-ի մայիսի 12-ի նիստի:

1. «Թումանյան Հոսպիտալիթի» ՍՊԸ-ի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող 45.5քմ 06-065-0001-0045-001 ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված 28.84քմ ենթակայանի շինությունը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականություն հանդիսացող գույքը ուղղակի վաճառքով օտարելու համաձայնություն տալու մասին:
3. Խրախուսման նպատակով միանվագ դրամական պարգևատրում հատկացնելու մասին:
4. « Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԱԿ Բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին:

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԽՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թ. մայիսի 12
h. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հացցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
է լ . փո ս տ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«12 » Մայիսի 2016 թվականի N 09-Ա

## «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 45.5ՔՄ 06-065-0001-0045-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 28.84ՔՄ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի, Հաշվի առնելով, որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին և հողամասը չի ընդգրկված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, ինչպես նաև «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ի համաձայնությունը՝ գնման նախապատվության իրավունքով գնելու, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված,«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ինքնակամ կառուցված և օրինակացված ենթակայանի շինությունը և զբաղեցրած հողամասը: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 1փողոց թիվ 91/1 հասցեում համայնքային սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման 02.12.2015թ. տրված N02122015-06-0015վկայական),«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 1փողոց թիվ 91/1 հասցեում ինքնակամ կառուցված և օրնականացված, համայնքային սեփականություն հանդիսացող 06-065-0001-0045-001 ծածկագրով, 45.5 քմ,հողամասը և արտաքին չափերով 28.84քմ մակերեսով ինքնակամ կառուցված ենթակայանի շինությունը, որից ենթակայան 28.84 քմ, (արտադրական)ուղղակի վաճառքով օտարել,«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ին և կնքել առքուվաճառքի պայմանագիր:
2. Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել.որ հողամասի սեփականատերը,

1)սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում. Ձորագետի համայնքապետարանի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաշվարկված 31932 /երեսուն մեկ հազար ինը հարյուր երեսուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար՝ համայնքապետարանի բյուջեի հ/հ900235421196 հաշվին, 45.5 քմ հողամասի համար, հողի կադաստրային արժեքով՝ 6552 /վեց հազար հինգ հարյուր հիսուն երկու/Հայաստանի Հանրապետության դրամով, յուրաքանչյուր 1 քմ՝ 144 /մեկհարյուր քառասունչորս/ Հայաստանի Հանրապետության դրամով, և համայնքապետարանի բյուջեի հ/հ900235421337 հաշվին, 28.84 քմ, մակերեսով ինքնակամ կառուցված ենթակայանի շինությունը՝ 25380/Քսանհինգ հազար երեք հարյուր ութանասուն/ Հայաստանի Հանրապետության դրամով, յուրաքանչյուր 1քմ՝ 880/ութհայուրութանասուն/ Հայաստանի Հանրապետության դրամով,

2) իր միջոցների հաշվին պետք է վճարվի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թ. Մայիսի 12
գ. Ձորագետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե  հ. Ձորագետ  1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Է լ . փո ս տ   dzoraget.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 12»  Մայիսի   2016  թվականի N 10-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականություն հանդիսացող տրանսֆորմատորը, ուղղակի վաճառքի ձևով օտարել «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ին :

2. Օտարվող տրանսֆորմատորի ուղղակի վաճառքի գինը սահմանել1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, գնահատված շուկայական արժեքով:

3. Միաժամանակ վաճառքից հետո օտարվող տրանսֆորմատորը պետք է ծառայի նաև Ձորագետ համայնքի բնակիչներին:

4. Կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման գնորդի միջոցներով:

5. Սույն որոշման ընդունման օրվանից 30-օրյա ժամկետում. Ձորագետի համայնքապետարանի բյուջեի հ/հ 900235421279 հաշվին պետք է վճարվի 1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ ( 5 )          Դեմ (0)          Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ          ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թ. Մայիսի 12

գ. Ձորագետ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե h. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » Մայիսի 2016 թվականի N 11-Ա

## ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» 219-րդհոդվածի 1-ինկետի 2-րդենթակետի դրույթներով Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հարապետության Լոռու մարզի Ձորագետ Համայնքի ղեկավար Լյովա Մարտիրոսի Գրիգորյանին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ 115000(Մեկ հարյուր տաս հինգ հազար) ՀՀ դրամի չափով իրեն վերապահված լիազորությունները բարեխիղճ կատարելու , 2016թ. բյուջեի առաջին եռամսյակի բարձր ցուցանիշները ապահովելու համար:

Կողմ (5 ) | Դեմ (0) | Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016 թ. Մայիսի 12

հ. Ձորագետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե h. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» Մայիսի 2016 թվականի N 12-Ա

## «ԼՈՌԻ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով,

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով,

ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» թիվ 1851-Ն որոշման, Ձորագետ համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝«Ձորահէկ ավանի ջրատարը» սեփականության իրավունքով անհատույց հանձնել «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԱԿ բաժնետիրական ընկերությանը:

2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Ձորագետ համայնք,

Գույքի ծածկագիրն է՝ 06-065-001-003

Գույքի մակերեսը՝ 1740մ

Գույքի նպատակային նշանակությունը՝ Կոմունալ ենթակառուցվածքների

Հողամասի գործառնական նշանակությունը ՝ բնակավայրի:

Կողմ ( 5 ) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱԹԻԿ ՔԱՆԻՆՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2016թ. Մայիսի 12

h. Ձորագետ